

ԳԱՐՈՒՆ ԶՏԵՍԱԾ

Դեռ ես չ'տեսած կեանքիս գարունը,
Յաջորդեց իսկոյն թօշնած աշունը:
Կեանքն է՝ փոթորիկ, մրրիկ, բուգ, բորան.
Որոտ ու կայծակ—սարք ու զարդարանք:

Յօղն ու անձրև, սելաւն ու կարկուտ,
Կեանքի արհաւիրք—գրոյց, բամբասանք.
Կամար ծիածան, երփներանգ գոյնով՝
Սէր, ուրախութիւն մարդկանցը բերկրանք:

Բայց այդ ամենին պէտք է դիմանալ,
Ինչպէս ժայռերը՝ կայծակի շանթին.
Ինչպէս էտրիչը, արեան մեծ ծովում
Ասպարէզ գալով—առաջ է վազում:

Տատասկ է բուսած մեր ճանապարհին
Տատասկը՝ պսակ, մեր շիրիմներին.
Եւ փոթորկալից, կեանքը մեր բաժին,
Հանգիստ է զգալու՝ յանձնելով հողին:

Ուրեմն լմւ չէ, անվախ, անտերունջ՝
Կռուել արիւնոտ—կռուի լայն դաշտում.
Գոնէ վաստակենք՝ անուն հերոս քաջ
Այդ է մնալու—անկուշտ աշխարհում:

Արամ Վերդեան